ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության լիազորությունները

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-287-Ն)

1. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) ոլորտում իրականացվող նպատակային ծրագրերի հաստատումը.

2) բուսասանիտարիայի միջազգային համագործակցության պետական ծրագրերի հաստատումը.

3) պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու կարգի սահմանումը.

4) պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման հանձնաժողովի կազմի և գործունեության կարգի սահմանումը.

5) պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգի և պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման եզրակացության ձևերի սահմանումը.

6) բույսերի կարանտինի սահմանումը և կարանտինի չեղյալ հայտարարումը.

7) պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությանը և շրջանառությանը ներկայացվող պահանջների սահմանումը.

8) պեստիցիդի և ագրոքիմիկատի փաթեթավորմանը ներկայացվող պահանջների սահմանումը.

8.1) բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու կարգի սահմանումը:

9) սույն օրենքից բխող իրավական այլ ակտերի ընդունումը:

(5-րդ հոդվածը փոփ. 17.12.14 ՀՕ-240-Ն, 23.03.18 ՀՕ-287-Ն)

Հոդված 5.1 Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմինը հաստատում է՝

1) բուսասանիտարական անձնագրի ձևը և տրամադրման կարգը.

2) բուսասանիտարական հաշվառման, վերահաշվառման, հաշվառման կասեցման կարգը, հաշվառման հայտի, հաշվառման վկայականի և գրանցամատյանի ձևերը:»: